42
26075
U-15

2010

Одобрено Попечительск. Совѣтомъ Кавказск. Учебн. Округа

Ծխական և պետական դպրոցների համար

ԴԱՍԱՏԵՍՐ ԿՐՕՆԻ

Ա. տարի

ԺԵ. տպ.

2(075)
Ա-15

Գինն է 25 կոպ.

Սահակ ա. Բ. Սահակիրացց

18

ԹԻՖԼԻՍ

Տպարան «Էսպերանսոյ», Ելիզ. № 17

1912

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

Տ. Տ. ԳԵՈՐԳ Ե.

Սրբազնագոյն Կաթողիկոսի Ամենայն Հայոց, Ծայրագոյն Պատրիարքի Համազգական Նախամեծար Արարատեան Առաքելական Մայր Աթոռոյ Սրբոյ Կաթողիկէ Էջմիածնի։

Ըստ բարձու հրամանի Նորին Օծութեան Վեհափառ Հայրապետի ազգիս Տ. Տ. ՄԿՐՏՉԻ Ա. Դիւանս թոյլատրէ տպագրութիւն ղասագրոյս եւ վաւերացուցանէ ստորագրութեամբ եւ դրոշմամբ կնքոյ Հայրապետական Դիւանի։

Ի 1-ն յուլիսի 1899 ամի, ի Ս. Էջմիածին։

Դիւանապետ Կորիւն վարդապետ։

Ա.

1.

Յանուն Հօր և Որդւոյ
և Հոգւոյն Սրբոյ. ամէն։

2.

Հայր մեր, որ յերկինս, սուրբ
եղիցի անուն քո. եկեսցէ արքայու-

թիւն քո. եղիցին կամք քո որպէս յերկինս և յերկրի. զհաց մեր հանապազորդ՝ տուր մեզ այսօր, և թող մեզ զպարտիս մեր, որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց, և մի՛ տանիր զմեզ ՝ի փորձութիւն, այլ փրկեա՛ զմեզ ՝ի չարէն, զի քո է արքայութիւն և զօրութիւն և փառք յաւիտեանս ամէն։

Երկնաւոր Հայր, քո անունը սուրբ լինի. քո թագաւորութիւնը գայ. քո կամքը լինի ինչպէս երկնքումը, այնպէս էլ երկրի վրայ. մեր ամենօրեայ հացը տուր մեզ այսօր. մեր պարտքը թող մեզ, ինչպէս որ մենք էլ մեր պարտապաններին ենք թողնում. մի՛ ձգիր մեզ փորձութեան մէջ, այլ փրկի՛ր չարից, որովհետև յաւիտեանս քոնն է թագաւորութիւնը, զօրութիւնը և փառքը. ամէն։

3. ԱՂՕԹՔ ԴԱՍԻՑ ԱՌԱՋ*)

Ամենաբարի Աստուած, առաքեա՛ առ մեզ զշնորհս Հոգւոյդ Սրբոյ, զի

*) Գլուխ 3, 4, 5. Պետ. դպրոցների համար։

պարգևեսցէ մեզ զմիտս և կաղդուրեսցէ զզօրութիւնս հոգւոց մերոց, որպէսզի մեք ընդունելով զաւանդեալ մեզ ուսմունս, զարգացուք քեզ ըստեղծողիդ մերում ՝ի փառս, ՝ի մխիթարութիւն ծնողաց մերոց, յօգուտ եկեղեցւոյ և հայրենեաց։

Ամենաբարի Աստուած, ուղարկի՛ր մեզ Սուրբ Հոգուդ շնորհը, որ մեզ միտք պարգևէ, զօրացնէ մեր հոգու կարողութիւնները, որպէսզի ուսում ստանանք, մեծանանք Ստեղծողիդ փառքի համար՝ մեր ծնողներին մխիթարելու և եկեղեցուն ու հայրենիքին օգտակար լինելու։

4. ԱՂՕԹՔ ԴԱՍԻՑ ԵՏՈՅ

Գոհանամք զքէն, Արարիչ, զի արժանի արարեր զմեզ շնորհաց քոց՝ ընդունելութեան ուսմանս։ Օրհնեա՛ զմեծաւորս, զծնողս և զուսուցիչս մեր, որք առաջնորդեն մեզ ՝ի գիտութիւն բարութեան և տուր մեզ կարողու-

թիւն 'ի շարունակութիւն ուսմանս այսորիկ։

Շնորհակալ ենք քեզնից, արարիչ Աստուած, որ արժանացրիր մեզ ուսումն ստանալու. օրհնիր մեր մեծաւորներին, ծնողներին և ուսուցիչներին, որոնք առաջնորդում են մեզ դէպի բարին. տուր մեզ ոյժ և կարողութիւն այս ուսումը շարունակելու։

5. ԱՂՕԹՔ ԹԱԳԱՒՈՐԻ ՀԱՄԱՐ

Տէր Աստուած մեր, կեցո՛ զամենաբարեպաշտ Թագաւորն և զԿայսրն Ռուսաց զՆիկոլայ Ալեքսանդրովիչն։ Զօրացո՛ զնա, օգնեա՛ զաւակաց և զօրաց նորա՝ պահելով զամենեսին 'ի խաղաղութեան։

Տէր Աստուած, կեանք տուր Ռուսաց Ամենաբարեպաշտ Թագաւոր և Կայսր Նիկոլայ Ալեքսանդրովիչին։ Զօրացրու նրան, օգնիր նրա զաւակներին, զօրքին և ամենին խաղաղութեան մէջ պահպանիր։

Բ.

6. ՍՈՒՐԲ ԿՈՅՍ ՄԱՐԻԱՄԻ ԾՆՈՒՆԴԸ ԵՒ ՏԱՃԱՐԻՆ ԸՆԾԱՅԵԼԸ

Քանանացւոց երկրում մի քաղաք կար՝ անունը Նազարէթ։ Այդ քաղաքում ապրում էր մի բարեպաշտ մարդ Յովակիմ անունով՝ իւր Աննա կնոջ հետ։ Սրանք որդի չունէին, դրա համար էլ շատ էին տխրում և Աստծուն միշտ աղօթում էին, որ իրանց մի զաւակ պարգևէ։ Մի անգամ էլ աղօթելիս խոստացան, որ եթէ Աստուած իրանց խնդիրը լսէ և մի որդի պարգևէ, իրան կընծայեն, որ տաճարին ծառայէ։ Աստուած լսեց բարեպաշտ ծնողների աղօթքը և մի աղջիկ պարգևեց նրանց, որի անունը Մարիամ դրին։ Երբ աղջիկը երեք տարեկան դարձաւ, Յովակիմն ու Աննան, ինչպէս խոստացել էին, տաճար տարան

նրան և ընծայեցին Աստծուն, իսկ իրանք դարձան Նազարէթ։ Մարիամը մնաց տաճարում. քահանայապետը նրա ուսուցիչն էր. սովորցնում էր նրան սուրբ գիրք կարդալ, աղօթել և տաճարին ծառայել։ Մարիամի նման ուրիշ շատ աղջիկներ էլ կային այնտեղ։ Մարիամը մնաց տաճարում մինչև տասն և չորս տարեկան դառնալը։ Նրա ծնողները մեռան, ուստի քահանաները Մարիամին յանձնեցին իւր ազգական Նազարէթցի ծերունի Յովսէփին, որի մօտ և ապրում էր։ Յովսէփն արհեստով հիւսն էր։

Սուրբ կոյս Մարիամի ծննդեան տօնը կատարում ենք սեպտեմբերի 8-ին, իսկ տաճարին ընծայելը՝ նոյեմբերի 21-ին։

7. ԱՌԵՏՈՒՄՆ

Մարիամը, ինչպէս տաճարում, այնպէս էլ Յովսէփի տանը, ազատ ժամերին սուրբ գիրք էր կարդում և աղօթում։

Մի անգամ, երբ Մարիամն աղօթում էր, Գաբրիէլ հրէշտակը երևաց նրան և ասաց. «Ողջոյն քեզ, Մարիամ, Աստուած քեզ հետ է»։ Երբ Մարիամը հրեշտակին տեսաւ, վախեցաւ ու մտածում էր, թէ ինչու համար է հրեշտակը իւր մօտ գալիս և ողջունում։ Հրեշտակն ասաց. «Մի վախիր, Մարիամ, Աստուած քեզ շատ է սիրում, դու մի որդի կունենաս և նրա անունը Յիսուս կդնես։ Նա Աստծու որդի կկոչուի, բոլոր մարդկանց կխրատի, կքարոզի և նրանց Փրկիչը կլինի։

Մարիամը խոնարհ կերպով պատասխանեց և ասաց. «Ես Աստծու աղախինն եմ, ինչպէս նրա կամքն է, թող այնպէս էլ լինի»։ Սրանից ետոյ հրեշտակը հեռացաւ Մարիամից։

Գաբրիել հրեշտակի Մարիամ կուսին աւետիք տալը տօնում ենք ապրիլի 7-ին։ Այս տօնի անունն է Աւետումն։

8. ՔՐԻՍՏՈՍԻ ԾՆՈՒՆԴԸ

Հին ժամանակ, երբ թագաւորներն ուզում էին իմանալ, թէ իրանց երկրի մէջ քանի մարդ կայ, հրամայում էին ամենին, որ գնան իրանց հայրենի քաղաքը՝ այնտեղի ցուցակի մէջ գրուեն և ապա սկսում էին համարել։ Այդպիսի մի հրաման դուրս եկաւ հէնց Յիսուս Քրիստոսի ծննդեան ժամանակ։

Յիսուսի ծնողները—Յովսէփն ու Մարիամը կենում էին Նազարէթ քաղաքում։ Բայց որովհետև Յովսէփը բեթղեհէմցի էր, այդ պատճառով վեր կացաւ և եկաւ իւր հայրենի քաղաքը։ Յովսէփն աղքատ էր. քաղաքի մէջ չկարողացաւ տուն վարձել, դրա հա-

մար վեր եկաւ քաղաքից դուրս մի այրում, ուր հովիւները վատ եղանա-



կին իրանց ոչխարներն էին բերում։

Այդ գիշեր Յիսուսը ծնուեց։ Ծնողները փաթաթեցին նրան բարուրի մէջ և դրին մսրում։

Բեթղեհէմը մեր երկրի նման ցուրտ չէ, այնտեղ տաք է—ձմեռը դրսում կարելի է քնել։ Այն երկրի հովիւները ամառ ձմեռ իրանց ոչխարները դուրսն էին պահում, միայն անձրևային եղանակին այրն էին բերում։

Երբ Յիսուս ծնուեց, ոչ ոք չգիտէր—հովիւները դաշտումն էին և իրանց ոչխարներն էին պահում։ Յանկարծ օդի մէջ մի հրեշտակ երևաց։ Այս բանից հովիւները վախեցան։ Հրեշտակն ասաց. «Մի վախենաք, ես ձեզ և բոլոր մարդկանց մեծ ուրախութիւն եմ յայտնում — ձեզ համար Բեթղեհէմում Փրկիչ է ծնուել, նա այրումն է, բարուրում փաթաթած և

մարի մէջ դրած»։ Այս խօսքերից ետոյ յանկարծ բազմաթիւ հրեշտակներ երևացին, որոնք երգում էին և ասում. «Փառք 'ի բարձունս Աստուծոյ և յերկիր խաղաղութիւն, 'ի մարդիկ հաճութիւն» — փառք Աստծուն երկնքումը, այսուհետև երկրիս վրայ խաղաղութիւն և մարդկանց մէջ սէր ու միաբանութիւն կլինի։

Երգելուց ետոյ հրեշտակները հեռացան։ Հովիւներն ասացին մէկ մէկու. «Գնանք Բեթղեհէմ և տեսնենք այս ինչ բան է, որ Աստուած ցոյց տուեց մեզ»։ Նրանք շտապով եկան և գտան Մարիամին, Յովսէփին և մանուկին բարուրի մէջ փաթաթած ու մսրում դրած։ Երբ տեսան, փառք տուին Աստծուն, երկրպագեցին մանուկին, այրից դուրս եկան և ամեն պատահողի աւետիք էին տալիս ու ասում, թէ Փրկիչը ծնուել է։

Յիսուսի ծնունդը կատարում ենք յունուարի 5-ին։

Շարական ծնունդեան

Խորհուրդ մեծ և սքանչելի,
Որ յայտմ աւուր յայտնեցաւ,
Հովիւք երգեն ընդ հրեշտակս՝
Տան աւետիս աշխարհի։

Այսօր մեծ և զարմանալի խորհուրդ յայտնուեց—հովիւները հրեշտակների հետ երգում են և աշխարհին աչքալոյս տալիս։

Ծնաւ նոր արքայ
'Ի Բեթղեհեմ քաղաքի,
Որդիք մարդկան օրհնեցէք,
Զի վասն մեր մարմնացաւ։

Նոր թագաւոր ծնուեց Բեթղեհեմ քաղաքում, մարդիկ, օրհնեցէք նրան, որովհետև նա մեզ համար ծնուեց։

9. ՔԱՌԱՍՈՒՆ ՕՐԱԿԱՆ ՅԻՍՈՒՍԻՆ ՏԱՆՈՒՄ ԵՆ ՏԱՃԱՐ

Հրէաների մէջ սովորութիւն կար—ով անդրանիկ և արու զաւակ էր ունենում, քառասուներորդ օրը մանուկին տանում էին Երուսաղէմի տաճարը, նուիրում Աստծուն. ետոյ զոհ էին անում, յետ գնում և դառնում իրանց տուն։ Հարուստ ծնողները զոհում էին մի գառը, իսկ աղքատները՝ մի զոյգ աղաւնի կամ տատրակ։

Երբ Յիսուս քառասուն օրական դարձաւ, ծնողները նրան էլ տարան Երուսաղէմի տաճարը։ Եւ որովհետև նրանք աղքատ էին, հետները վերցրին մի զոյգ աղաւնի։

Այդ ժամանակ Երուսաղէմում կենում էր մի ծերունի մարգարէ՝ Սիմէօն անունով։ Նա խնդրել էր Սուրբ Հոգուն՝ մինչև Յիսուսին աչքով չտես-

(204528)
96-38
1964

նէ, չմեռնի։ Երբ Յիսուսին տաճար բերին, Սիմէօն ծերունին իմացաւ նրա գալը. դուրս եկաւ նրա առաջ. գըր-

կեց. փառք տուեց Աստծուն և ասաց. «Տէր Աստուած, այժմ առ իմ հոգին, որովհետև ես տեսայ Փրկչին, որին սպասում էի»։ Յովսէփն ու Մարիամը

զարմանում էին այս խօսքերի վրայ։

Տաճարում մի կին մարգարէ էլ կար՝ Աննա անունով։ Սա ևս ճանաչեց Յիսուսին. փառաբանում էր Աստծուն և ամենին պատմում, թէ նա այն Փրկիչն է, որ Աստուած խոստացել է։

Այս տօնը կատարում ենք Փետրուարի 14-ին. տօնի անունն է—Տեառնընդառաջ։

10. ՏԱՍՆԵՐԿՈՒ ՏԱՐԵԿԱՆ ՅԻՍՈՒՍ ԳՆՈՒՄ Է ՏԱՃԱՐ

Հրէաները մեզ նման ամեն քաղաքում և գիւղում եկեղեցի չունէին։ Նրանք միայն մի տաճար ունէին ամբողջ երկրի մէջ՝ այն էլ Երուսաղէմ քաղաքում։ Դրա համար ամեն տարի հեռու տեղերից բազմաթիւ ուխտաւորներ էին գալիս, մանաւանդ Զատկի տօնին։ Ուխտաւորներն այնքան շատ էին լինում, որ քաղաքի մէջ այլևս տեղ չէր լինում, դրա համար

քաղաքից դուրս՝ լեռների վրայ վրան-
ներ էին խփում և այնտեղ կենում։
Տօնը տևում էր եօթն օր։ Փոքրերին
չէին տանում հետները, վախենում-
էին, որ բազմութեան մէջ չկորչեն։

Յիսուսի ծնողներն էլ Զատկի տօ-
նին ամեն տարի ուխտ էին գնում։
Երբ Յիսուս տասն երկու տարեկան
դարձաւ, առաջին անգամ նրան էլ
հետները տարան։

Տօնի օրերն անցան։ Ծնողները կա-
մենում էին Նազարէթ դառնալ, բայց
յանկարծ տեսան, որ մանուկ Յիսու-
սը չկայ։ Քաղաքի մէջ շատ փնտռե-
ցին, բայց չգտան։ Կարծեցին թէ ծա-
նօթների կամ հարևանների հետ Նա-
զարէթ դարձած կլինի, դրա համար
Երուսաղէմից դուրս եկան. մի օրուայ
ճանապարհ եկան. հասան իրանց ծա-
նօթներին. հարց ու փորձ արին, բայց
չգտան։ Նորից ետ դարձան Երուսա-

ղէմ, մի օր էլ այնտեղ փնտռեցին և

երրորդ օրը գտան նրան տաճարում։

Յիսուս այստեղ վիճաբանում էր վարդապետների հետ—նրանց հարցեր էր տալիս և պատասխանում առաջարկած հարցերին։ Ամենքն էլ զարմանում էին նրա իմաստուն պատասխանների վրայ և ասում—ո՞րտեղից գիտէ սա այսքան բաներ։ Ծնողները, երբ Յիսուսին տեսան, շատ ուրախացան։ Մայրն ասաց. «Որդեակ, այդ ի՞նչ բերիր մեր գլխին—երեք օր է՝ ես և հայրդ քեզ փնտռում ենք»։ Յիսուս պատասխանեց. «Մի՞թէ չգիտէիք, որ ես իմ հօր տանը կլինեմ»։ Սրանից ետոյ Յիսուս ծնողների հետ դարձաւ Նազարէթ. նա հնազանդ էր—լսում էր նրանց խօսքին և օգնում հօրը հիւանդութեան մէջ։

11. ՅԻՍՈՒՍԻ ՄԿՐՏՈՒԹԻՒՆԸ

Յորդանան գետի ափերուս՝ մի

իմաստուն մարդ էր բնակւում՝ Յովհաննէս անունով։ Նա մարգարէ էր, քարոզում էր—մարդիկ ամեն կողմից

գալիս էին նրա մօտ, խորհուրդ էին հարցնում և խոստովանում իրենց մեղքերը՝ սխալները։ Ով խոստովանում էր

չկրկնել իւր սխալները, Յովհաննէսը նրան մկրտում էր Յորդանան գետի մէջ և ասում—ես քո մարմինը մաքրեցի, գնա դու էլ սիրտդ մաքրիր։

Յիսուսն էլ եկաւ Յովհաննէսի մօտ մկրտուելու։ Նա արդէն երեսուն տարեկան էր։ Յիսուս դեռ չէր մօտեցել Յովհաննէսին, որ նա հեռուից ճանաչեց նրան և բարձր ձայնով ասաց իւր մօտ կանգնողներին. «Ա՛յ, տեսէք Աստծու գառը գալիս է, սա պէտք է մարդկանց ազատէ իրանց մեղքերից»։

Յիսուս մօտեցաւ Յովհաննէսին և յայտնեց, որ կամենում է նրանից մկրտուել։ Յովհաննէսը զարմացաւ և ասաց. «Ե՛ս պէտք է քեզնից մկրտուեմ, դո՛ւ ես ինձ մօտ գալիս»։ Յիսուս պատասխանեց. «Մկրտի՛ր ինձ, որովհետև դու տարիքով ինձնից մեծ ես»։ Սրանից ետոյ Յովհաննէսն էլ չհակառակեց և մկրտեց Յիսուսին Յորդանան գետի մէջ։

Երբ Յիսուս մկրտուեց և ջրից դուրս եկաւ, երկինքը բացուեց և

Սուրբ Հոգին աղաւնու կերպարանքով իջաւ նրա վրայ, իսկ հայր Աստուածն էլ վերևից ձայն տուաւ. «Դա է իմ սիրելի որդին, որին ես հաւանեցի, դրան լսեցէք»։

Մինչև այժմ շատ քիչ մարդիկ գիտէին, թէ Յիսուս Աստծու որդին էր, բայց հիմա ամենքն էլ պարզ կերպով տեսան և հաւատացին, որ նա Աստծու որդին է։ Դրա համար էլ մկրտութեան օրը մարդիկ իրար շնորհաւորում են և ասում. «Շնորհաւոր յայտնութիւն»։

Յիսուսի մկրտութեան տօնը կատարում ենք յունուարի 6-ին։ Նոյն օրը կատարում ենք և ծննդեան տօնը։

12. ՅԻՍՈՒՍ ՔԱՐՈԶՈՒՄ Է ԵՒ ԲԺՇԿՈՒՄ

Յիսուս իւր մկրտութիւնից ետոյ սկսեց շրջել երկրի մէջ և ամեն տեղ քարոզում ու բժշկում էր—կոյրերին

աչք էր տալիս, կաղերին՝ ոտք, խուլերին լսողութիւն և մեռելներին՝ յա-



ղութիւն։ Յիսուս օր ու գիշեր հան-

գիստ չունէր, ման էր գալիս ամեն տեղ և քարոզում—տխուրներին մըխիթարում էր, հարուստներին ասում էր, որ իրանց ունեցածից աղքատներին էլ բաժին տան. ամենին խրատում էր, որ միմեանց օգնեն և սիրեն իրար՝ ինչպէս ինքն է սիրում ամենին։ Փոքրերին խրատում էր, որ ծնողներին լսեն և ուսուցիչներին յարգեն։ Յիսուս այնպէս սիրուն էր քարոզում, որ ժողովուրդն էլ չէր գնում քահանաների մօտ, այլ միշտ գալիս էր նրա քարոզը լսելու։ Քահանաները նախանձում էին և ասում—եթէ այսպէս թողնենք, ամենքն էլ Յիսուսի մօտ կգնան, էլ մեզ մօտ ոչ ոք չի գայ, մեր պատիւը և արդիւնքը կպակասի։ Այս պատճառով քահանաները թշնամացան Յիսուսի հետ և մտածում էին նրան սպանել տալ։

Յիսուս ինչ որ խօսքով քարոզում-

էր, նոյնը գործով էլ ցոյց էր տալիս, իսկ քահանաները միայն ասում էին, իսկ իրանց ասածները իրանք էլ չէին կատարում։

13. ՄԱՐԻԱՄ ԵՒ ՄԱՐԹԱ

Մի անգամ Յիսուս քարոզելով եկաւ իւր ծանօթ Ղազարոսի մօտ, որ կենում էր Բեթանիա գիւղում՝ Երուսաղէմին մօտիկ։ Ղազարոսը երկու քոյր ունէր, մէկի անունը Մարթա էր, իսկ միւսին՝ Մարիամ։ Երկու քոյրն էլ Յիսուսին շատ էին սիրում։ Երբ իմացան, որ Յիսուս հիւր է եկել՝ էլ չգիտէին թէ ինչպէս պատիւ տան նրան։ Մարիամը նստեց Յիսուսի մօտ և ուշադրութեամբ լսում էր նրա ասածները։ Իսկ Մարթան մեծ պատրաստութեան մէջ էր—աշխատում էր

տեսակ-տեսակ կերակուրներ պատրաստել Յիսուսի համար։

Մարթան երբ տեսաւ, որ Մարիամը չի գալիս իրան օգնելու, եկաւ Յիսուսի մօտ և ասաց. «Տէր, տեսնում-ես, որ քոյրս ինձ մենակ է թողել, ասա, որ գայ և ինձ օգնէ»։ Յիսուս պատասխանեց. «Մարթա, Մարթա, կարիք չկայ այդքան կերակուրներ պատրաստելու, մի տեսակ էլ որ լինի, բաւական է ինձ համար։ Դու կարող ես քո քոյր Մարիամից օրինակ վերցնել, նա աւելի լաւ ձևով է պատուում ինձ՝ նա լսում է իմ քարոզները— ով ինձ սիրում է, թող իմ խօսքերը լսէ և կատարէ»։

Սրանով Յիսուս մեզ սովորցնում-է, որ Մարթայի պէս աշխատասէր լինենք և Մարիամի նման մեծի խօսքը լսող։

14. ՅՈՒԴԱՅ

Յիսուս ունէր տասներկու աշակերտ. նրանք կոչւում են առաքեալներ։ Սրանցից մէկը, որի անունը Յուդայ էր, լաւ մարդ չէր, աչքածակ էր, փող շատ էր սիրում։ Զատիկը մօտեցել էր։ Այդ տօնից առաջ Յուդան ծածուկ գնաց Յիսուսի թշնամիների՝ քահանաների մօտ և ասաց. «Ի՞նչ կտաք ինձ, որ Յիսուսին ձեզ մատնեմ»։ Նրանք ուրախացան և երեսուն արծաթ փող խոստացան։

Այնուհետև Յուդան յարմար ժամանակ էր փնտռում՝ թէ ինչպէս Յիսուսին մատնէ, որ նա չիմանայ։ Բայց Յիսուս Աստծու որդի էր, նա ամէն բան գիտէր։ Յիսուս տեսաւ, որ Յուդան իրեն պիտի մատնէ և իւր մահը մօտենում է, ուզեց վերջին անգամ իւր բոլոր աշակերտների հետ միասին Զատկի ընթրիքն ուտել։ Յիսուս կամեցաւ էլի մի անգամ սրտանց խօսել նրանց հետ, խրատել և այնպէս բաժանուել։

15. ՈՏՆԱԼՈՒԱՅ

Երեք օր էր մնացել մինչև հրէաների Զատիկը։ Այդ օրերում նրանք ուտում էին բաղարջ հաց և խորոված գառը։ Աւագ հինգշաբթի օրը Յիսուս պատուիրեց իւր աշակերտներին վերնատան մէջ ընթրիք պատրաստել, որ զատիկը միասին կատարեն։ Աշակերտներն էլ այնպէս արին, ինչպէս որ ուսուցիչը պատուիրեց։ Երեկոյեան Յիսուս տասն և երկու առաքեալների հետ սեղան նստեց և ասաց. «Սրտով ցանկացայ այս ընթրիքը ձեզ հետ ուտել՝ մահից առաջ»։

Հրէաները սովորութիւն ունէին

հացից առաջ լուացուել, ուստի Յիսուս այս ասելուց ետոյ՝ ընթրիքից վերկացաւ, հանեց վերևի շորերը, մէջքին սրբիչ կապեց, ջուրն ածեց կոնքի (աւազանի) մէջ, սկսեց աշակերտների ոտները լուալ և սրբել։ Ոտները լուալուց ետոյ Յիսուս ասաց իւր աշակերտներին. «Տեսաք ես ինչ արի։ Դուք ինձ կանչում էք տէր և

վարդապետ, շատ էլ լաւ էք անում։ Եթէ ես խոնարհութիւն արի և ձեր ոտները լուացի, ուրեմն դուք էլ ամենի հետ այդպէս խոնարհ պիտի վարուէք»։

Սրանից ետոյ ընթրիքի նստեց և տխուր ձայնով ասաց իւր աշակերտներին. «Ձեզնից մէկն այս գիշեր ինձ պիտի մատնէ»։ Այս նրա համար ասաց, որ իրան մատնող աշակերտն զգուշանայ, սխալն ուղղի, բայց իզուր։ Յուդան այնպէս էր ցոյց տալիս իրան, որպէս թէ ինքը չէ մատնողը և ոչինչ չգիտէ։

Աշակերտներն այս խօսքերի վրայ տրտմեցան և միմեանց էին նայում— չգիտէին թէ ում մասին է ասում։ Ամեն մէկը տեղից վեր էր կենում և հարցնում. «Տէր, մի՞թէ ես եմ»։ Յուդան էլ հարցրեց. «Մի՞թէ ես եմ, վարդապետ»։ Յիսուս պատասխանեց. «Դու

ես ասում, թէ ես եմ», ետոյ աւելացրեց. «Գնա, ինչ անելու ես, շուտով արա»։ Յուդան երբ տեսաւ, որ Յիսուս, ամեն բան գիտէ, ամօթից էլ չկարողացաւ մնալ այնտեղ, վերկացաւ և գնաց նրա թշնամիների մօտ։ Արդէն երեկոյ էր—մթնել էր։

Աւագ հինգշաբթի օրը քահանան եկեղեցում կատարում է ոտնալուայի կարգը և կարագ իւղ է բաժանում։

Ոտնալուայի շարական

Այսօր կանգնեցաւ
Աւազան մկրտութեան
'Ի թողութիւն մեղաց մերոց։

Այսօր հաստատուեց մկրտութեան աւազան՝ մեր մեղքերի թողութեան համար։

Այսօր Տէրն մեր
Լուանայր զոտս աշակերտաց
Եւ պատուիրէր զայս ասելով։

Այսօր մեր տէր Յիսուս լուանում էր իւր աշակերտների ոտները և պատուիրելով ասում էր։

Մի ոմն ի ձէնջ, եղբայրք,
Մատնելոց է զիս 'ի մահ
Եւ որոշի յաշակերտացդ։

Ձեզնից մէկը, եղբայրներ, ինձ մահուան պիտի մատնէ և բաժանուի աշակերտներից։

16. ԽՈՐՀՐԴԱՒՈՐ ԸՆԹՐԻՔ.

Երբ Յուդան դուրս գնաց, Յիսուս ասաց. «Ձեզ մօտ երկար չեմ կարող մնալ, շուտով պիտի հեռանամ ձեզնից, բայց դուք իրար այնպէս պիտի սիրէք՝ ինչպէս որ ես եմ ձեզ սիրել—սրանով ամենքն էլ կիմանան, որ դուք իմ աշակերտներն էք»։

Բացի սրանից Յիսուս կամեցաւ մի ուրիշ յիշատակ էլ թողնել, որ երբ ինքն այլևս երկրի վրայ չի լինի, իրան միշտ յիշեն։ Ուստի ընթրիքից ետոյ առաւ բաղարջ հաց, օրհնեց, կոտրեց, աշակերտներին բա-

ժանեց և ասաց. առէք, կերէք այս է իմ մարմինը»։ Եւ ոյ մաքուր գինին

առաւ, օրհնեց, տուեց նրանց և ասաց. «Խմեցէք ամենքդ, սա իմ ա-

րիւնն է—ամեն անգամ, երբ այս հացը ուտէք և այս բաժակից խմէք, յիշեցէք ինձ»։

Մենք էլ այժմ այդպէս ենք անում։ Տօն օրերին քահանան պատարագ է անում և հացն ու գինին օրհնում։ Ցանկացողները գնում են եկեղեցի, քահանային խոստովանում են իրենց մեղքերը և պատարագից ետոյ հաղորդւում Յիսուսի մարմնով և արիւնով։ Սա միևնոյնն է, ինչ որ Յիսուս վերնատանը կատարեց։

17. ՅԻՍՈՒՍ ԳԵԹՍԵՄԱՆԻ ՊԱՐՏԻԶՈՒՄ

Հացն օրհնելուց ետոյ՝ Յիսուս իւր աշակերտների հետ դուրս եկաւ Երուսաղէմից և բարձրացաւ Ձիթենեաց լեառը։ Այստեղ Յիսուս ասաց աշակերտներին. «Ինձ այս գիշեր կըռնեն, իսկ դուք ամենքդ էլ կթողնէք ինձ և կփախչէք»։ Բոլոր աշակերտները միա-

բերան ասացին. «Կմեռնենք, բայց քեզ մենակ չենք թողնի ու փախչի»։

Զիթենեանց լերան կողքին մի պարտէզ կար՝ անունը Գեթսեմանի։ Յի-

սուս այստեղ եկաւ և ասաց իւր ա-



շակերտներին. «Սպասեցէք այստեղ, աղօթեցէք, արթուն կացէ՛ք, չքնէք, որ

փորձութեան մէջ չընկնէք»։ Իսկ ինքը հեռը վերցրեց աշակերտներից երեքին, մի փոքր առաջ գնաց, երեսի վրայ ընկաւ և այսպէս էր աղօթում. «Հայր, եթէ կարելի է, այս չարչարանքը (բաժակը) հեռացրու ինձնից, բայց եթէ չես կամենայ, քո կամքն է»։ Յիսուս աղօթքից դարձաւ, տեսաւ որ աշակերտները քնել են և նորից ասաց. «Արթուն կացէ՛ք և աղօթեցէ՛ք, որ փորձութեան մէջ չընկնէք»։ Այս ասաց, դարձեալ հեռացաւ աշակերտներից և նոյն ձևով աղօթեց։ Այն ժամանակ Աստուած հրեշտակին ուղարկեց, որ զօրացնէ Քրիստոսին։ Երեք անգամ այսպէս աղօթելուց ետոյ՝ Յիսուս դարձաւ և աշակերտներին էլի քնած գտաւ ու ասաց. «Քանի՞ քնէք, հասաւ ժամը, երբ Յուդան ինձ պիտի մատնէ, վեր կացէ՛ք, ահա գալիս է նա»։

18. ՅԻՍՈՒՍԻ ՄԱՏՆՈՒԹԻՒՆԸ

Այս խօսքերից ետոյ Յուդան բազ-



մաթիւ զինուորներով ներս մտաւ

պարտէզ՝ սրերով և լապտերներով։ Եկողները Յիսուսին չէին ճանաչում, սրա համար էլ Յուդան առաջուց նշան էր տուել, թէ ում որ համբուրեմ, իմացէ՛ք Յիսուսը նա է, նրան բռնեցէ՛ք։

Մատնիչը մօտեցաւ Յիսուսին, համբուրեց և ասաց. «Բարև, վարդապետ»։ Յիսուս պատասխանեց. «Յուդա, համբուրելով ես մատնում ինձ»։ Այն ժամանակ զինուորները մօտեցան Յիսուսին, բռնեցին և կապեցին, իսկ աշակերտները թողին և փախան։

19. ՅԻՍՈՒՍ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏԻ ԱՌԱՋ

Զինուորները Յիսուսին կապած տարան քահանայապետի մօտ։ Այստեղ ժողոված էին Քրիստոսի թշնամիները, որ նրա համար մահու պատիժ նշանակեն։ Քրիստոս ի հարկէ արդար

էր—նա Աստծու որդի էր, բացի լաւութիւնից ոչ մէկին վատութիւն չէր արել, որ մեղաւոր դուրս բերեն, որպէսզի կարողանան սպանել տալ։ Դրա համար սուտ վկաներ պատրաստեցին, որոնք հաստատում էին, թէ Յիսուս Աստծուն հայոյել է, իսկ Աստուած հայհոյողին, հրէաների օրէնքով, սպանում էին։ Այստեղ թքեցին Յիսուսի երեսին. բռունցքով ծեծեցին. ծաղրեցին և մինչև լոյս չարչարեցին։

20. ՅՈՒԴԱՅԻ ՄԱՀԸ

Յուդան երբ տեսաւ, որ իւր մատնութիւնով վճռեցին Յիսուսին սպանել, խիղճը տանջեց, վեր առաւ երեսուն արծաթը, տարաւ, ետ տուեց քահանայապետներին ու ասաց. «Ես սխալուեցի, անմեղ մարդու մատնեցի»։ Նրանք էլ պատասխանեցին. «Մեզ ինչ, դու գիտես, ինչ ուզում ես արա»։

Յուդան, երբ տեսաւ որ Յիսուսին չի կարող օգնել, փողը ձգեց քահանայապետների առաջ և գնաց, խեղդուեց,

որովհետև քանի յիշում էր Յիսուսի արած լաւութիւնները և իւր վատութիւնը, չգիտէր թէ ինչ անէր, քուն չուներ հանգիստ չուներ։

21. ՅԻՍՈՒՍ ՊԻՂԱՏՈՍԻ ԱՌԱՋ

Հինգշաբթի գիշեր հրէաները Յիսուսի համար, իրանց օրէնքով, մահուան վճիռ նշանակեցին, բայց մինչև որ երկրի մեծ դատաւոր Պիղատոսն իրանց վճիռը չհաստատէր, իրաւունք չունէին Յիսուսին սպանել, ուստի ուրբաթ առաւօտը վաղ՝ կապած տարան Պիղատոս դատաւորի մօտ, որ իրանց վճիռը հաստատէ։

Պիղատոսը դուրս եկաւ նրանց մօտ և ասաց. «Ի՞նչ դանգատ ունիք այս մարդու վրայ»։ Նրանք պատասխանեցին. «Դա ժողովրդին մոլորեցնում է, ասում է թագաւորին հարկ մի՛ տաք և իրան թագաւոր է անուանում»։ Այս որ լսեց Պիղատոսը, Յիսուսին ներս տարաւ իւր սենեակը, քննեց և տեսաւ, որ բոլորն էլ սուտ է—նախանձում են, որ Յիսուս իրանցից լաւ է քարոզում և իրանց սխալները ըրռ-

նում է։ Պիղատոսը դուրս բերաւ Յիսուսին և յայտնեց հրէաներին, որ նա արդար է։

Քահանայապետները և ժողովուրդը, երբ տեսան որ Յիսուս պիտի ազատուէ, սկսեցին աւելի բարձր աղաղակել և ասել. «Եթէ դու մեր վճիռը չես հաստատի, կայսեր մօտ քեզնից գանգատ կանենք»։ Պիղատոսը վախեցաւ հրէաներից՝ չլինի թէ իրա մասին էլ այսպիսի ստեր հնարեն և մէկ էլ չէր ուզում մի մարդու համար հրէաների մեծամեծներին նեղացնել, ուստի վեր առաւ ջուր, ձեռները լուաց նրանց առաջ և ասաց. «Ես Յիսուսին մեղաւոր չեմ գտնում, դուք գիտէք, տարէք, ինչ ուզում էք, արէք—խաչեցէք»։ Ժողովուրդը միաբերան աղաղակեց և ասաց. «Թող դրա արիւնը մեր և մեր որդւոց գլխին լինի»։

22. ՅԻՍՈՒՍԻ ԽԱՉԵԼՈՒԹԻՒՆԸ

Երբ հրէաները Յիսուսին խաչե-

լու հրամանն ստացան, հէնց նոյն օրը

առաւօտեան զինուորները վեր առան

նրան և տարան, որ խաչեն։

Երուսաղէմի մօտ մի բլուր կար՝ անունը Գողգոթա։ Որոշեցին, որ Յիսուսին այնտեղ խաչեն։

Յիսուս ինքըն էր տանում իւր խաչափայտը։ Եւ որովհետև հինգշաբթի ամբողջ գիշերը չէր քընել, սաստիկ յոգնել էր, ուստի ճանապարհին վայր

ընկաւ խաչափայտի տակ։

Երբ Գողգոթա հասան, Յիսուսի ձեռները և ոտները փայտերի վրայ մեխեցին—խաչեցին։ Պիղատոսը խաչի վերևում մի տախտակ կախեց և նրա վրայ գրել տուեց, թէ Յիսուսին ինչու են պատժում։ Տախտակի վրայ գրուած էր—«Յիսուս Նազովրեցի Հրէաների Թագաւոր»։ Յիսուսի հետ երկու աւազակ էլ խաչեցին, մինը աջ կողմում, իսկ միւսը՝ ձախ։

Թէև հրէաները խաչեցին Յիսուսին, բայց նա էլի աղօթում և խնդրում էր Հայր Աստծուն, որ չպատժէ նրանց։ Իսկ հրէաներն ընդհակառակը ծաղրում էին և ասում. «Եթէ դու Աստուած ես, եթէ դու հրէաների թագաւորն ես, ինչու չես ազատում քեզ»։

Յիսուսի խաչի մօտ էին կանգնած նրա մայրը և Յովհաննէս աշակերտը։

Յիսուս շատ էր մտածում մօր համար



և ցաւում էր նրա վրայ, ուստի Յովհաննէսին յանձնեց, որ պահէ մօրը։

Այն օրից սկսած՝ Մարիամը Յովհաննէսի մօտն էր ապրում մինչև իւր մահը։

Ժամը իններին խաչեցին Յիսուսին, իսկ ժամը երեքին ճաշից ետոյ ասաց. «Ծարաւ եմ»։ Զինուորներից մինը խղճաց նրան, սպունգը քացախի մէջ թաթախեց, երկար փայտի ծայրին դրաւ և Յիսուսի շրթունքին մօտեցրեց, որ ճաշակէ և ցաւը մեղմէ։

Սրանից ետոյ Յիսուս բարձր ձայնով ասաց. «Հայր, հոգիս քեզ եմ յանձնում»։ Այս ասաց գլուխը կախեց և հոգին աւանդեց։

Այդ ժամանակ արևը խաւարեց, երկիրը շարժուեց և ժայռերը պատռուեցան։ Այս որ տեսան, ամենքը լաց էին լինում և ասում. «Ուղիղ որ Յիսուս Աստծու որդի էր և մենք նրան իզուր տեղը խաչեցինք»։

Սուրբ Աստուած, սուրբ և հզօր, սուրբ և անմահ, որ խաչեցար վասն մեր ողորմեա՛ մեզ։

23. ԹԱՂՈՒՄ

Ուրբաթ երեկոյ Յիսուս մեռաւ։ Միւս օրը շաբաթ էր—հրէաների Զատիկը—եթէ Յիսուսին խաչի վրայ տեսնէին, հանգիստ սրտով Զատկի գառը չէին ուտի, դրա համար էլ գընացին Պիղատոսի մօտ և խնդրեցին, որ իրաւունք տայ Յիսուսի մարմինը խաչի վրայից վերցնեն։ Պիղատոսը, երբ իմացաւ Յիսուսի մահը, մի քանի զինուոր ուղարկեց Գողգոթա իմանալու՝ արդեօք Յիսուսը մեռել է, թէ ոչ։

Զինուորներից մինը կամեցաւ ճըշտել Յիսուսի մահը, ուստի վեր առաւ գեղարդը, ծակեց կողը, որտեղից արիւն և ջուր բղխեց, որ նշանակումէ, թէ նոր է մեռել։

Պիղատոսը, երբ ստուգեց Յիսուսի մահը, թաղման իրաւունքը տուաւ։

Սրանից ետոյ մի իշխան մարդ՝ անունը Յովսէփ, որ Յիսուսի ծածուկ աշակերտն էր, Պիղատոսից խնդրեց, որ մարմինն իրան բաշխեն։ Մի ուրիշ աշակերտ էլ՝ Նիկոդիմոս անունով, եկաւ և բերաւ անուշահոտ խընկեր և կտաւ։ Սրանք երկուսով գընացին Գողգոթա, Յիսուսի մարմինը խաչից վայր բերին, օծեցին, պատանեցին և թաղեցին։

Յովսէփը իւր պարտիզում իրեն համար մի գերեզման ունէր պատրաստած։ Բայց որովհետև Յիսուսին շատ էր սիրում, ուստի իւր գերեզմանը նրան տուաւ։ Ահա այստեղ դրին Յիսուսի մարմինը՝ մի մեծ քար էլ գլորեցին դրանն ու գընացին։

24. ՅԻՍՈՒՍԻ ՅԱՐՈՒԹԻՒՆԸ

Շաբաթ օրը հրէաների կիւրակէն է—ոչ մի բանի ձեռք չեն տալիս, սրա համար էլ այդ օրը ոչ ոք չգնաց Յիսուսի գերեզմանը տեսնելու։ Բայց

երբ շաբաթն անցաւ՝ կիւրակէ առաւօտը շատ վաղ՝ դեռ առաւը դուրս չեկած՝ Մարիամ Մագթաղենացին և երկու ուրիշ կին զանազան անուշահոտ խնկեր պատրաստեցին և գնացին, որ մարմինն օծեն։

Կանայք ճանապարհին ասում էին միմեանց. «Ո՞վ կըգլորէ գերեզմանի բերնի մեծ քարը»։ Բայց երբ մօտեցան, տեսան, որ քարը դէն էր ձըգած գերեզմանի բերնից։ Մարիամ Մագթաղենացին վազեց աշակերտների մօտ իմաց տալու այս բանը, իսկ միւսները գերեզման մտան և տեսան, որ մի երիտասարդ սպիտակ շորերով նստած է գերեզմանի վրայ՝ աջ կողմում—դա հրեշտակն էր։ Կանայք վախեցան։ Հրեշտակն ասաց նըրանց. «Մի՛ վախենաք, ես գիտեմ՝ դուք խաչուած Յիսուսին էք որոնում, բայց ի՞նչու էք կենդանին մե-

ռելների մէջ փնտռում—նա այստեղ



չէ, յարութիւն առաւ։ Գնացէք, ասացէք նրա աշակերտներին, որ Յի-

սուս նրանցից առաջ կգնայ Գալիլիա, այնտեղ կարող են տեսնել նրան, ինչպէս որ ինքն էլ առաջուց ասել է»

Յիսուսի յարութիւն առած օրը մեծ տօն է. տօնի անունն է Զատիկ։ Այդ օրը կարմիր ձու են ներկում, գառը մորթում և պասքա պատրաստում։

25. ՅԻՍՈՒՍԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՆ

Յարութիւնից ետոյ Յիսուս 40 օր էլի մնաց երկրիս վրայ և շատ անգամ տեսնուեց իւր աշակերտների հետ։ Քառասուն օրից ետոյ Յիսուս իւր աշակերտներին տարաւ Ձիթենեաց լեառը և ասաց. «Ես այլ ևս ձեզ մօտ չեմ լինի, ես պիտի գնամ իմ Հայր Աստծու մօտ. դուք Երուսաղէմից չհեռանաք, սպասեցէք այնտեղ. ես կխնդրեմ Աստծուն, որ նա իմ փոխարէն Սուրբ Հոգին ուղարկէ ձեզ մխի-

թարելու և օգնելու։ Եւ երբ Սուրբ Հոգին երկնքից ձեզ վրայ կիջնէ, դուք իսկոյն զօրութիւն կստանաք՝ ուրիշ մարդիկ կդառնաք. ետոյ կերթաք ամեն տեղ և կքարոզէք մարդկանց իմ մասին։ Սովորեցրէք նրանց այն ամենը, ինչ որ ինձնից ուսել էք։ Ով ձեր քարոզները լսէ, նրան մկրտեցէք Հօր, Որդու և Սուրբ Հոգու անունով։ Ով ձեզ կհաւատայ և կմկրտուէ, կազատուէ մեղքերից, իսկ ով չի հաւատայ, կպատժուի»։

Այնուհետև օրհնեց իւր աշակերտներին և երկինք բարձրացաւ։ Բարձրանալու ժամանակ մի ամպ եկաւ և ծածկեց նրան՝ այնպէս որ աշակերտներն այլ ևս չտեսան Յիսուսին։ Նրանք երկրպագեցին և ուրախ-ուրախ ետ դարձան Երուսաղէմ և ամեն օր տաճարում օրհնում էին Աստծուն ու սպասում Սուրբ Հոգուն։

Համբարձման տօնը կատարում ենք Զատկից 40 օր ետոյ. տօնի անունն է Համբարձումն։

26. ՀՈԳԵԳԱԼՈՒՍՏ

Համբարձումից ետոյ առաքեալ-ները դարձան Երուսաղէմ և միասին էին վերնատանը։ Տասն օրից ետոյ երկնքից յանկարծ մի ձայն լսուեց՝ սաստիկ փչող քամու նման և լցրեց այն տունը, որտեղ նստած էին աշակերտները։ Սուրբ Հոգին կրակէ լեզուների նման առանձին-առանձին իջաւ իւրաքանչիւրի գլխին։ Այս միևնոյն Սուրբ Հոգին Յիսուսի մկրտութեան ժամանակ աղաւնու նման իջաւ նրա վրայ։ Սրանից ետոյ առաքեալները լցուեցան Սուրբ Հոգւով, շնորհներ ստացան և սկսեցին զանազան լեզուներով խօսել։

Այդ ժամանակ Երուսաղէմում կային՝ բացի երուսաղէմացի հրէաներից, նաև աշխարհիս ամեն կողմերից ուխտ եկած շատ բարեպաշտ

հրէաներ։ Երբ երկնքից իջնող ձայնը

լսուեց, ուղտաւորները շփոթուեցին և մի տեղ հաւաքուեցին։ Աշակերտ-

ներն սկսեցին ամենի հետ իրանց հասկանալի լեզուով խօսել։ Ամենքը զարմացած լսում էին, թէ առաքեալներն ինչպէս ուրիշ-ուրիշ լեզուներով էին խօսում։ Ոչ ոք չէր հաւատում իւր լսածին ու տեսածին, սրա համար էլ մէկը միւսին հարցնում էր. «Չէ՞ որ այս խօսողները բոլորն էլ գալիլիացիներ են, անուսում մարդիկ, տեսէք, ինչպէս մեր լեզուներով խօսում և պատմում են Աստծու մեծամեծ գործերը—այս ի՞նչ բան է»։ Իսկ ոմանք էլ ծաղրում էին և ասում. «Երևի սրանք հարբած են»։

Այն ժամանակ Պետրոս առաքեալը տեղից վեր կացաւ և սկսեց այսպէս խօսել. «Ով հրէաստանցիներ և Երուսաղէմում բնակուողներ, լաւ լսեցէք ինչ որ ձեզ քարոզելու եմ—

մենք հարբած չենք, ինչպէս կարծում-էք, որովհետև դեռ առաւօտեան ժա-



մի ինն է, այդ ժամին մարդ գինի չի խմում։ Լսեցէք, ով իսրայէլացիներ,

Աստուած Յիսուս Նազովրեցուն աշխարհ ուղարկեց. նա եկաւ և ձեր մէջ հրաշքներ գործեց։ Դուք նրան չհաւատացիք և խաչեցիք, բայց Աստուած նրան երեք օրից ետոյ յարութիւն տուաւ. 40 օրից ետոյ երկինք համբարձաւ և այնտեղից մեզ համար Սուրբ Հոգին ուղարկեց։ Այժմ մենք, որ զանազան լեզուներով ենք խօսում, դա ոչ թէ մեր շնորհն է, այլ՝ երկնքից եկած Սուրբ Հոգու։

Երբ այս քարոզը լսեց ժողովուրդը, զղջաց, խոստովանեց որ սխալուել է Յիսուսին խաչելով, ուստի շատերը գալիս էին Պետրոսի և միւս առաքեալների մօտ ու հարցնում. «Ի՞նչ անենք, որ մեր սխալն ուղղենք, այժմ հաւատում ենք նրան»։ Պետրոսը պատասխանում էր և ասում նրանց. «Ապաշխարեցէք և մկրտուեցէք Յիսուս Քրիստոսի անունով։ Ով կմկրտուէ, նա ևս մեզ նման Սուրբ Հոգու շնորհը կընդունէ»։ Այդ օրը երեք հազար մարդիկ հաւատացին Պետրոսի խօսքերին, մկրտուեցին և քրիստոնեայ դարձան։

Հոգեգալստեան տօնը կատարում ենք Զատկից 50, իսկ Համբարձումից 10 օր ետոյ. տօնի անունն է Հոգեգալուստ։

ՊԵՏ ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГСС Библиотека
ՀՍՍՌ-Арм ССР
Ա. ԻՄ. Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՅԱՆԿ

երես

Ա.

1. Յանուն Հօր. 3
2. Հայր մեր 3
3. Աղօթք դասից առաջ 4
4. » » Եռոյ 5
5. » Թագաւորի համար 6

Բ.

6. Ս. Կոյս Մարիամի ծնունդը և . . . 7
7. Աւետումն 8
8. Քրիստոսի ծնունդը 11
9. Յիսուսին տանում են տաճար . . . 17
10. 12 տարեկան Յիսուս գնում է տաճար . 19
11. Յիսուսի մկրտութիւնը 22
12. Յիսուս քարոզում և բժշկում է. . . 26
13. Մարիամ և Մարթա 29
14. Յուդա 32
15. Ոտնալուայ 33
16. Խորհրդաւոր ընթրիք 37
17. Յիսուս Գեթսէմանի պարտիզում . . 39
18. Յիսուսի մատնութիւնը 43
19. Յիսուս քահանայապետի առաջ . . . 44
20. Յուդայի մահը 45
21. Յիսուս Պիղատոսի առաջ. 47
22. Յիսուսի խաչելութիւնը 49
23. Թաղում 54
24. Յիսուսի յարութիւնը 56
25. Յիսուսի համբարձումն 59
26. Հոգեգալուստ 62

ՀԱՅԿԱԶՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ԳՈՐԻՆ ՀԱՅԿԱԶՆՈՒԹԻՒՆ
27532-ՀՈՐ.

1n

428

428

2013

1580/1